# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
## Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ
## WESTERN PRELACY
### OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



## ԿԻՐԱԿՄՈՒՏՔԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԷՆ» ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Շաբաթ, 8 Օգոստոսին, Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ Կիրակմուտքի ժամերգութիւն տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 6-ին :

Արարողութիւնը պիտի կատարէ եւ պիտի քարոզէ Գերպ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան:

## EVENING SERVICES AT THE PRELACY CHAPEL

On Saturday, August 8th, 2009, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, evening services will take place at the Prelacy “St. Dertad and St. Ashkhen” Chapel.

Very Rev. Fr. Muron Aznikian will conduct the service and deliver the sermon.

The service will begin at 6:00 p.m.

***

## Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ԿԼԵՆՏԷՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

Կիրակի, 16 Օգոստոսը, Սուրբ Աստուածածնայ վերափոխման տօնն է, մեր եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն մէկը: Աստուածածնայ տօնը նաեւ տօնն է Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան:

Այս տօնին առիթով, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. եւ Անմահ պատարագ պիտի մատուցուի, ապա տեղի պիտի ունենան անդաստանի եւ խաղողօրհնէքի աւանդական արարողութիւնները:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի պատարագէ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամը պիտի փոխանցէ Կլէնտէյլի Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Ս. Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազանը պիտի կատարէ մատաղօրհնէքն ու խաղողօրհնէքը:

Նշենք, որ Շաբաթ, Օգոստոս 15-ի երեկոյեան, եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի նախատօնակի հսկում, եւ եկեղեցին իր դռները բաց պիտի պահէ մինչեւ կէս գիշեր, ուխտաւոր հաւատացեալներուն համար:

## EPISCOPAL DIVINE LITURGY AND BLESSING OF GRAPES AT ST. MARY'S CHURCH ON THE FEAST OF ASSUMPTION

On Sunday, August 16th, 2009, the Armenian Church will celebrate the Feast of the Assumption of the Holy Mother of God. This feast is also the name day of St. Mary's Church in Glendale.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy, deliver the sermon, and conduct the blessing of grapes at St. Mary's Church.

On Saturday, August 15th, eve of the Feast of Assumption services will take place at St. Mary's Church and the church will remain open until midnight.

***

## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ» ՄԷՋ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Տարիներու աւանդութեան համաձայն, Ուրբաթ, Օգոստոս 14-ին, կ.ա. ժամը 10:00-ին, Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ մասնակցութեամբ հոգեւոր հովիւներուն, խաղողօրհնէքի արարողութիւն տեղի պիտի ունենայ Mission Hills-ի «Արարատ Տան» հիւանդանոցի բաժինին մէջ, որմէ ետք Ս. Պատարագ պիտի մատուցուի հաստատութեան մատրան մէջ:

Ս. Պատարագը պիտի մատուցանէ եւ պիտի քարոզէ Փասատինայի Ս. Սարգիս Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խորէն Քհնյ. Պապօշեան:

Յաւարտ Ս. Պատարագի Առաջնորդ Սրբազանն ու հոգեւոր հայրերը մտերմիկ պահ մը պիտի բոլորեն հաստատութեան պատասխանատուներուն ու անձնակազմի անդամներուն հետ:

## DIVINE LITURGY AND BLESSING OF GRAPES AT ARARAT HOME IN CELEBRATION OF THE FEAST OF ASSUMPTION

In celebration of the Feast of the Assumption of the Holy Mother of God and in keeping with years' long tradition, on the morning of Friday, August 14th, 2009, Divine Liturgy will be celebrated at Ararat Home in Mission Hills. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy, which will be celebrated by pastor of St. Sarkis Church Rev. Fr. Khoren Babochian. Clergy members will participate in the Liturgy.

Prior to Divine Liturgy, which will be celebrated in the Chapel, the blessing of grapes will take place at the nursing facility.

Following services, the Prelate and clergy will meet with the residents and administration.

***

## ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹՔ ԵՒ ԽԱՂՈՂՕՐՀՆԷՔ՝ ԿԼԵՆՏԷՅԼԻ ADVENTIST ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՄԷՋ

Տարիներէ ի վեր, Ս. Աստուածածին եկեղեցին կը գործակցի Կլենտէյլի Adventist հիւանդանոցին հետ եւ ամէն տարի, Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով, յատուկ արարողութիւն կը կատարուի հիւանդանոցին մէջ:

Արարողութեան ներկայ կ'ըլլան հիւանդանոցի պատասխանատուներ, պաշտօնեաներ եւ հիւանդներ:

Տարիներու աւանդութեան համաձայն, Չորեքշաբթի, Օգոստոս 12-ի առաւօտեան, Ս. Աստուածածնայ տօնին առթիւ, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներն ու սարկաւագները պիտի այցելեն Glendale Adventist հիւանդանոցը եւ անոր մատրան մէջ պիտի կատարեն բժշկութեան աղօթք եւ խաղողօրհնէք:

Արարողութենէն ետք, քահանայ հայրերը պիտի այցելեն հիւանդանոցի հայ հիւանդներուն, պիտի աղօթեն անոնց առողջութեան համար եւ օրհնուած խաղող պիտի բաժնեն անոնց:

## BLESSING OF GRAPES AT GLENDALE ADVENTIST HOSPITAL

Each year, in the days preceding the Feast of Assumption, the pastors and deacons of St. Mary's Church in Glendale visit Glendale Adventist Hospital where they conduct services and the blessing of grapes.

This year's service will take place on the morning of Wednesday, August 12th, 2009.

Following the service, the pastors will visit patients to offer prayers and blessed grapes.

***

## ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ՝ ԱՐԺ. Տ. ԽՈՐԷՆ Ա. ՔՀՆՅ. ՀԱՊԷՇԵԱՆԻ «ԳԻՐ ԿԵԱՆՔԻ» ՀԱՏՈՐԻՆ

Հովանաւորութեամբ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, եւ կազմակերպութեամբ Մուսա Լերան Հայրենակցական Միութեան, Հինգշաբթի, 27 Օգոստոսին, երեկոյեան ժամը 7:30-ին, Ազգային Առաջնորդարանի »Տիգրան եւ Զարուհի Տէր Ղազարեան«

սրահին մէջ տեղի պիտի ունենայ Արժ. Տ. Խորէն Ա. Քհնյ. Հապէշեանի «Գիր Կեանքի» հատորին շնորհահանդէսը:

Հեղինակին գործը պիտի ներկայացնէ Տիար Սարգիս Մահսէրէճեան:

Պիտի իրագործուի գեղարուեստական յայտագիր:

Պաշտօնական յայտագրի աւարտին տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն: Մուտքը ազատ է:

## WESTERN PRELACY TO HOST BOOK PRESENTATION OF ARCHPRIEST FR. KHOREN HABESHIAN'S "KEER GYANKI"

The Mousa Dagh Compatriotic Union has organized a book presentation of Archpriest Fr. Khoren Habeshian's recently published book "Keer Gyanki", which will take place at the Prelacy "Dikran and Zarouhi Der Ghazarian" Hall on Thursday, August 27th, 2009.

The event is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and begins at 7:30 p.m. The book will be presented by Mr. Sarkis Mahserejian.

An artistic program will also take place, as well as a reception afterwards.

***